ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 22

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. հունիսի 19-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **06.06.2023թ.-ի «Ալաշկերտ»-«Փյունիկ» (ՊԼ-146) «Ալաշկերտ» թիմի կողմից գովազդային կողավահանակների սահմանված քանակից քիչ լինելը, ոչ պատշաճ տեղադրումը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 46-րդ կետը՝ որպես պատասխանատվության միջոց «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ կիրառել «Նկատողություն»:

2. **06.06.2023թ.-ի «Ուրարտու»-«Արարատ» (ՊԼ-177) «Ուրարտու» թիմի միայն մեկ փոխարինման էլեկտրոնային ցուցատախտակ ունենալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 75-րդ կետը՝ որպես պատասխանատվության միջոց «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի նկատմամբ կիրառել «Նկատողություն»:

3. **04.06.2023թ.-ի «Նոա»-«Վան» (ՊԼ-180) խաղի ժամանակահատվածում 1) «Նոա» թիմի ֆուտբոլիստ Սերգեյ Մուրադյանի (47472) կողմից անվայել վարքագիծ և ոչ մարզական պահվածք դրսևորելը, 2) «Վան» թիմի ֆուտբոլիստ Ուիլսոն Հոզե Բարրիոս Ռոնդոնի (47396) կողմից անվայել վարքագիծ և ոչ մարզական պահվածք դրսևորելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Նոա» թիմի ֆուտբոլիստ Սերգեյ Մուրադյանի (47472) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Վան» թիմի ֆուտբոլիստ Ուիլսոն Հոզե Բարրիոս Ռոնդոնի (47396) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Վան ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

Որակազրկումը տարածվում է 04.06.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:

4. **02.06.2023թ.-ի «Փյունիկ»-«Ուրարտու» (ՊԼ-175) 1) «Փյունիկ» թիմի երկրպագուների կողմից լազերի օգտագործումը, 2) «Փյունիկ» թիմի երկրպագուների կողմից ծխային և ձայնային ռումբերի պայթեցումը, 3) «Ուրարտու» թիմի երկրպագուների կողմից բազմաթիվ ձայնային և ծխային ռումբերի, ֆայերների օգտագործումը,**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Փյունիկ ՖԱ» ՀԿ կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 28-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Փյունիկ ՖԱ» ՀԿ կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

3) Հաստատված համարել «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով։
Հաստատված համարել «Փյունիկ ՖԱ» ՀԿ կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով

5. 17.06.2023թ.-ի «Ուրարտու-1-09»-«Վանաձոր-08» (15A-077) խաղին անհարգելի պատճառով «Վանաձոր-08» թիմի չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վանաձոր-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Վանաձոր ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով։

6. 07.06.2023թ.-ի «Միկա-08»-«Փյունիկ-1-09» (15A-082) խաղին «Փյունիկ-1-09» թիմի մարզիչ Սարգիս Նազարյանի (161) կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Փյունիկ-1-09» թիմի մարզիչ Սարգիս Նազարյանի (161) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ վերջինիս զրկել ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից մինչև սույն թվականի սեպտեմբերի 15-ը ներառյալ և «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով։